ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

30.10.2015 15:58

ՀՀ փաստաբանների պալատում այսօր՝ հոկտեմբերի 30-ին, հյուրընկալվել են Անանիա Շիրակացի վարժարանի ավարտական դասարանների աշակերտները, ովքեր շրջայց են կատարել Հանրային պաշտպանի գրասենյակում, ՀՀ Փաստաբանական դպրոցում և ՀՀ փաստաբանների պալատում:

Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանը ներկայացրել է Հանրային պաշտպանի աշխատանքի էությունը, ցույց է տվել այն պայմանները, որտեղ ուսումնառություն են ստանում ապագա փաստաբանները և ներկայացրել Փաստաբանական դպրոց ընդունվելու ու ավարտելու կարգը և պայմանները:

Իրավունքի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտներին ընդունել է նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը:

Աշակերտները հետաքրքրվել են թե՞ որն է այն մոտիվացիոն, որով իրավաբանը կարող է դառնալ փաստաբան: Անանիա Շիրակացի վարժարանի աշակերտներին պարզաբանվել է այն մարդկային և մասնագիտական որակները, որ պետք է ունենա իրավաբանը, երբ ընտրում է փաստաբան դառնալու պատասխանատու ճանապարհը:

Աշակերտների խոսքով, նրանցից մի քանիսը նպատակադրվել են դառնալ փաստաբան:

Առաջարկվող նորություններ

20.10.2014ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է «ՀԵՐԱՑԻ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ



17.03.2016ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 195 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })